4 Խոնավ մանկություն

Գրիպ կամ ֆսֆսացող քթերի սիմֆոնիա 5

6 Բոլոր դռները



7 Տաղանդավոր մարդը տաղանդավոր է ամեն ինչում

ISSN 1829-149X
9 771829 149003 09001

ով իրազեկված է, նա պաշտպանված է

արտակարգ թերթ

N 1 (274) 22.1.2009 - 28.1.2009 www.emergency.am

Սպիտակի երկրաշարժից 20 տարի անց

2008 թվականի գլխավոր իրադարձությունն արտակարգ իրավիճակների գծով Սպիտակի երկրաշարժի 20-ամյա տարելիցն էր, Սպիտակի դասերից ամենայուրացվածն ու տարվա խորհուրդը՝ Արտակարգ իրավիճակների նախարարության ստեղծումը: Իսկ Սպիտակի սերտած դասերից մեկն էլ դիտարկվում էր հանրային իրազեկման համակարգի կայացումն ու բնակչության պատրաստվածության աստիճանի բարձրացումը:

Իրազեկման խնդիրները ոչ միայն մեր հանրապետության, այլեւ աշխարհի շատ երկրների, միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում են:

Հարաճուն աղետները դիմագրավելու նպատակով՝ ՄԱԿ-ը մշակել ու կյանքի է կոչել Աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը (ISDR), որի առաքելությունն ամուր, կենսունակության մեծ պաշարներ ունեցող համայնքների կառուցումն է՝ աղետների նվազեցման կարեւորության մասին իրազեկվածության բարձրացման միջոցով, միաժամանակ նպատակ ունենալով նվազեցնել աղետների պատճառած մարդկային, սոցիալական, տնտեսական եւ շրջակա միջավայրի կորուստները:

Ռազմավարության իրականացումն ուղղված է հետեւյալ նպատակներին.

- աղետների նվազեցման հիմնախնդրի վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարելավում.
- խնդրի նկատմամբ իշխանության պետական մարմինների հակվածության ապահովում.
- գործընկերության խթանում.
- տարերային աղետների պատճառների ու վտանգավոր բնական երեւույթների ազդեցության հետեւանքների վերաբերյալ գիտելիքների ընդլայնում:

«Որքան շատ լինեն վտանգի, ռիսկի, խոցելիության մասին տեղեկացված մարդիկ, տարածաշրջանային կազմակերպություններ, կառավարություններ, ոչ կառավարական կազմակերպություններ, ՄԱԿ-ի կառույցներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ եւ իմանան, թե ինչպես պետք է կառավարել բնական վտանգների ազդեցությունները, այնքան ավելի շատ կսկսեն իրագործվել աղետների նվազեցման միջոցներ՝ հասարակության բոլոր խավերում: Կանխումը սկսվում է տեղեկացվածությունից»:

Տեղեկատվությունը՝ կյանքը փրկելու միջոց

Կարմիր խաչի եւ կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիան աշխարհի ամենամեծ մարդասիրական կազմակերպությունն է, որն օգնություն է տրամադրում բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ունեն՝ առանց հաշվի առնելու ազգային, ռասայական, կրոնական, դասակարգային եւ քաղաքական պատկանելությունը:

Աղետների ժամանակ տեղեկատվության հոսքը վճռորոշ նշանակություն ունի մարդասիրական գործողությունների արդյունավետության համար: Միջազգային ֆեդերացիայի 2005 թ. համաշխարհային աղետների զեկույցի մեջ շեշտը դրվել էր աղետների ժամանակ տեղեկատվության ապահովման վրա, քանի որ իրազեկվածությունը կարող է լինել նույնիսկ ամենախոցելի մարդկանց հասանելի՝ աղետին դիմագրավելու միակ ձեւը:

Հատված Կարմիր խաչի եւ կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Մարկու Նիսկալայի զեկույցից

Հետադարձ հայացք նետելով 2004 թ. իրադարձություններին՝ ապշում ես, որ տարվա ընթացքում պատահած աղետների մեծ մասից հնարավոր էր խուսափել ավելի լավ տեղեկատվության եւ հաղորդակցության շնորհիվ: Հազարավոր մարդկանցից միայն տասնյակներին էր աղետը պատուհասել հանկարծակի, առանց «զգուշացնելու»:

2004 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ցունամին էլ, որն այդքան կյանքեր ու ապրուստի միջոցներ խորտակեց, իր արտացոլումն է գտել Կարմիր խաչի եւ կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի 2005 թ. տարեկան զեկույցում: Բանն այն է, որ Սումատրայի շրջակայքում գործող գիտնականներն արձանագրել էին ողբերգության պատճառ խոշոր երկրաշարժը, սակայն միջոցներ չէին ունեցել մարդկանց տեղեկացնելու, թե ինչ է կատարվելու եւ ինչ պետք է անել:

Բայց եւ այնպես, ոչ պաշտոնական ցանցերը հաճախ հաջողություն են ունենում այնտեղ, որտեղ տապալվում են պաշտոնական նախազգուշացումները: Դեկտեմբերի 26-ի վաղ առավոտյան Սինգապուրում ապրող ոմն Վիջայակումար Գունասեկարա ռադիոյով լսում է ցունամիի ամայացնող հարվածի մասին: Նա անմիջապես ահազանգում է Հնդկաստանի արեւելյան ափին բնակվող իր ընտանիքին, ինչն օգնում է ժամանակին տարահանել գյուղի 3630 բնակիչներին եւ փրկել նրանց կյանքը:

Վաղ նախազգուշացումն այն միջոցն է, որի դեպքում ժամանակին եւ ճիշտ տեղեկատվությունը **«միայնակ»** կարող է փրկել մարդկանց:

Այս եւ մյուս շաբաթ օրերին, ժամը 15.30-ին, Հ2 հեռուստաընկերության եթերում «Արտակարգ ալիք» հաղորդաշարն է:

Հունվարի 24-ին կարող եք դիտել.

- Ջմեռային դեպրեսիա. մի շտապեք ահաբեկվել, եթե ձեզ էլ է այն պատուհասել: Ծանոթացեք այդ երեւույթի ախտանշաններին եւ շրջանցեք դեպրեսիան՝ մինչեւ կգա գարունը:

- Եթե բնակարանը տաքացնելու համար օգտագործում եք ինքնաշեն սալիկ, եթե տան լարանցումները կատարել է ոչ թե մասնագետը, այլ դուք ձեր՝ սեփական ոչ արհեստավարժ ձեռքերով կամ էլ ձեր հարեւանը, որ մասնագիտությամբ բանասեր է, տնտեսագետ, մաթեմատիկոս կամ ամեն ինչ՝ բացի էլեկտրիկից՝ դիտեք լարերի ու այլ հրդեհավտանգ իրերի մասին պատմող տեսանյութը:
- Անցած շաբաթ 6 եւ ավելի մագնիտուդ ուժգնությամբ 6 երկրաշարժ է գրանցվել աշխարհում: Վեց դեպքում էլ երկրաշարժի էպիկենտրոնը բավական հեռու է գտնվել բնակավայրերից: Հայաստանում էլ երկրաշարժեր են եղել...

Այս եւ այլ թեմաների մասին՝ շաբաթ, 15.30-ին, Հ2-ի եթերում:

«Էլիտ Գրուպն» առաջարկում է կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլեւս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպը» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

քրոնիկոն

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Փակ դռների հետեւում

Դեկտեմբերի 31-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Ե. Կողբացու փողոցի 2 շենքի 49-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում դռան եւ հեռախոսի զանգերին:

Ահազանգի վայր մեկնած փրկարարները, բնակարանի դուռը բացելով, հայտնաբերել են 1930 թ. ծնված Աստղիկ Ջանիկյանի դին:

***

Նմանատիպ ահազանգ է ստացվել նաեւ հունվարի 3-ին. Երեւանի Անդրանիկի փողոցի 78 շենքի 31 բնակարանի դուռը չի բացվում, եւ զգացվում է փրկարարների կարիքը:

Ահազանգի վայր մեկնած փրկարարները բացել են բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերել են 24-ամյա Ալինա Աղայանի դին եւ անգիտակից վիճակում գտնվող 19-ամյա Մհեր Ծատուրյանին, որը հաջորդ օրը մահացել է հիվանդանոցում:

Հարուցվել է քրեական գործ:

***

Հունվարի 8-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ազատության պողոտայի 8 շենքի 44-րդ բնակարանի բնակչուհին չի արձագանքում դռան եւ հեռախոսի զանգերին: Դեպքի վայր մեկնած փրկարարները բնակարանում հայտնաբերել են 1975 թ. ծնված Լիլիթ Մուրադխանյանի դին:

***

Այդ օրը նմանատիպ մեկ այլ ահազանգ է ստացվել, որ Կարապետ Ուլնեցու 1-ին փակուղու 2ա շենքի 2-րդ բնակարանի բնակչուհին չի արձագանքում դռան եւ հեռախոսի զանգերին:

Ահազանգի վայր մեկնած փրկարարները, բացելով բնակարանի դուռը, հայտնաբերել են 1945 թ. ծնված Նվարդ Հարությունյանի դին:

Շմոլ գազից թունավորումներ

Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ հունվարի 4-ին շմոլ գազից թունավորումով Գյումրիի Ավստրիական հիվանդանոց են տեղափոխվել Տրդատ Ճարտարապետի փողոցի 22ա շենքի բնակիչներ՝ 14-ամյա Արմեն եւ 12-ամյա Արման Չարխիֆալակյանները:

Այդ օրը նույն ախտանիշով Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց է տեղափոխվել Վերոնշյալ փողոցի 5/2 շենքի բնակիչ, 21-ամյա Հայկազ Տոնոյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը գնահատվել է բավարար:

***

Հունվարի 13-ին շմոլ գազից թունավորումով Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր է տեղափոխվել Լոռու մարզի Գուգարք գյուղի 7-րդ շենքի 28 բնակարանի բնակիչ, 1979 թ. ծնված Լիլիթ Ղազարյանը, իսկ Վանաձորի «Նարեկ» մանկական հիվանդանոց են տեղափոխվել նույն հասցեի բնակիչներ՝ 2001 թ. ծնված Աննա ու 2005 թ. ծնված Սերժիկ Հովսեփյանները:

***

Հունվարի 18-ին Ստեփանավանի հիվանդանոցից տեղեկություն է ստացվել, որ շմոլ գազից թունավորումով իրենց մոտ են տեղափոխվել քաղաքի Միքայելյան փողոցի 47ա տան բնակիչ, 1985 թ. ծնված Ստեփան Շահինյանը եւ Ռաֆֆու փողոցի 40 տան բնակիչ, 1983 թ. ծնված Լիլիթ Բաբայանը:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը միջին ծանրության է:

Այլ թունավորումներ

Հունվարի 6-ին «աղիքային ինֆեկցիա» ախտորոշումով Գյումրիի «Ավստրիական» մանկական հիվանդանոց է տեղափոխվել Աթաբեկյան 33-րդ փողոցի 59 տան բնակիչ, 2 տարեկան Գոհարիկ Անտոնյանը:

Ըստ բժիշկների՝ երեխայի վիճակը գնահատվում է բավարար:

***

Հունվարի 11-ին դեղորայքից թունավորումով Թալինի հիվանդանոց է տեղափոխվել Արագածոտնի մարզի Դավիթաշեն գյուղի բնակիչ, 4-ամյա Ռազմիկ Վարդանյանը:

Դուրս բերվեցին ձյան գերությունից

Հունվարի 1-ին Արագածոտնի մարզի Մուղնի գյուղի բնակիչներից մեկն ահազանգել է, որ Աշտարակի Ալիշանի փակուղում իր ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից եւ հայտնվել ձյան մեջ:

Հրշեջ-փրկարարների օգնությամբ «ՎԱԶ-2101» մակնիշի 36 LO 010 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է բերվել երթեւեկելի մաս:

***

Հունվարի 3-ին ուժեղ ձնաբքի հետեւանքով Գորիս-Երեւան ավտոճանապարհի 15-րդ կմ-ին խցանվել են մի շարք ավտոմեքենաներ: Դեպքի վայր մեկնած հրշեջ-փրկարարների եւ Գորիսի «Ճանշինտրանս» ՓԲԸ աշխատակիցների ուժերով խցանումից դուրս է բերվել 6 ավտոմեքենա:

***

Հունվարի 5-ին Եղեգնաձոր-Մարտունի ավտոճանապարհի 35-րդ կմ-ին «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենան ձնաբքի հետեւանքով դուրս է եկել երթեւեկելի մասից եւ հայտնվել ձյան մեջ:

>>> 3

միջազգային լուրեր

Ավստրալիայում արտակարգ իրավիճակ է

Ուժեղ անտառային հրդեհներ են մոլեգնում Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգում: Մի քանի օրվա ընթացքում նահանգի տարածքում գրանցվել է հրդեհների բռնկման 20 նոր օջախ: Հրդեհների բռնկման հիմնական պատճառը կայծակի հարվածներն են:

Տեղի իշխանությունների կարգադրությամբ նահանգում արտակարգ դրություն է հայտարարվել: Կրակի ճիրաններում են հայտնվել Սիդնեյի արվարձանները, ինչպես նաեւ Բուդավանգ արգելանոցը, որտեղ արդեն այրվել է ավելի քան 100 հա անտառ: Հրշեջների աշխատանքներին խոչընդոտում են եղանակային վատ պայմանները: Օդերեւութաբանների կանխատեսումներով՝ +40-ի հասնող օդի ջերմաստիճանը կպահպանվի եւս մի քանի օր:

Փլվել է եկեղեցու տանիքը

Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքի եկեղեցիներից մեկում փլվել է շինության տանիքը, ինչի հետեւանքով զոհվել է յոթ մարդ: Ըստ դեպքի վայրում աշխատող փրկարարների՝ մոտ 50 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Հայտնի է, որ կիրակնօրյա պատարագի ժամանակ եկեղեցում գտնվում էր 400-500 հավատացյալ:

Տանիքի փլուզման պատճառները ճշտվում են:

Թռչնագրիպի նոր զոհեր

Հունվարի 16-ին Չինաստանի կառավարությունը հայտարարել է, որ պատրաստվում է աննախադեպ միջոցառումներ ձեռնարկել՝ թռչնագրիպի տարածումը կանխելու նպատակով: Նման անհանգստության պատճառ է դարձել այն, որ վերջին մեկ շաբաթվա ընթացքում վտանգավոր վիրուսով վարակվել է չորս եւ մահացել երեք մարդ: Չինաստանի առողջապահական համակարգի բոլոր հաստատություններն անցել են

ուժեղացված աշխատանքային ռեժիմի: Մայրաքաղաք Պեկինում արգելվել է թռչունների եւ թռչնամսի ներկրումը:

Կանխարգելիչ միջոցառումներ են ձեռնարկվում նաեւ Վիետնամում, որտեղ գրանցվել է թռչնի գրիպի վիրուսով մարդու վարակման մեկ դեպք:

Հունվարի 15-ին Նեպալում արձանագրվել է թռչնի գրիպի բռնկման առաջին օջախը: Վիրուսի հայտնաբերման տարածքում հայտարարվել է կարանտին:

Ընկել են գնացքի տանիքից

Հունվարի 19-ի երեկոյան վթարվել է Հնդկաստանի Ֆայզաբադ քաղաք ուղեւորվող գնացքը: Վթարի հետեւանքով զոհվել է վեց մարդ, եւս երկու հարյուր ուղեւորներ ստացել են տարբեր վնասվածքներ:

Ինչպես հայտնել են ոստիկանության ներկայացուցիչները, գնացքի վագոններում եւ նույնիսկ տանիքին տեղավորվել էին զորակոչիկների հավաքակայան ուղեւորվող երիտասարդներ:

Հրաշք Հուդզոնի վրա

Հունվարի 14-ին խոշոր ավիապատահար է գրանցվել ԱՄՆ-ում: Ամերիկյան ավիաուղիներին պատկանող օդանավը Նյու Յորքի մոտակայքում վթարային վայրէջք է կատարել Հուդզոն գետի վրա: Օդանավի մեջ եղել է 155 մարդ, այդ թվում՝ անձնակազմի 5 անդամները:

Ինքնաթիռը գետում է հայտնվել օդ բարձրանալուց ընդամենը մի քանի րոպե հետո: Նախնական տվյալներով՝ ինքնաթիռի ձախ թեւին գտնվող շարժիչի մեջ ընկել է մեկ կամ մի քանի թռչուն: Դրանից հետո օդաչուն ուղեւորներին տեղյակ է պահել, որ թռչունների հետ բախման հետեւանքով ինքնաթիռը գնալու է վթարային վայրէջքի եւ ստիպված է վերադառնալ Նյու Յորքի օդանավակայան: Սակայն վայրկյաններ անց օդանավի շարժիչները դադարել են աշխատել, եւ օդաչուն որոշել է իջնել Հուդզոն գետի վրա: Ինքնաթիռի անձնակազմի հմտության շնորհիվ այն փափուկ վայրէջք է կատարել գետի սառը ջրերին: Դեպի վթարված օդանավ են շտապել արագ արձագանքման ծառայությունների նավակները:

A-320-ի բոլոր ուղեւորներն ու անձնակազմի անդամները ողջ են մնացել: Հիվանդանոց է տեղափոխվել ընդամենը 5 մարդ՝ մեկը ոտքերի կոտրվածքով, իսկ մյուսները՝ գերսառեցման նշաններով: Ողջ աշխարհի զանգվածային լրատվամիջոցներն այս դեպքը հրաշք են համարում: Իսկ ամերիկացիներն արդեն օդաչուին հերոս են կոչում:

Նշենք, որ Միացյալ Նահանգների Հետաքննությունների դաշնային բյուրոն բացառել է ահաբեկչական գործողության վարկածը:

Ֆաինա Թյունիբաբյան

արագ արձագանքման ծառայություններ

<<< 2 Փրկարարների օգնությամբ «ՎԱԶ-2121» մակնիշի 16 US 025 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է բերվել երթեւեկելի մաս:

Ավտոմեքենան ջրափարում

Հունվարի 5-ին Արմավիրի մարզի Ակնաշեն-Գայ ավտոճանապարհին զուգահեռ հոսող ջրատարն է ընկել «Օպել» մակնիշի 06 OS 289 պետհամարանիշով ավտոմեքենան:

Դեպքի վայր մեկնած փրկարարներն ավտոկռունկի միջոցով ավտոմեքենան դուրս են բերել ջրատարից, իսկ ջրատարի հիմքի մոտ հայտնաբերել են ավտոմեքենայի վարորդ, Վաղարշապատի Սովետական Բանակի փողոցի 36 տան բնակիչ, 1955 թ. ծնված Սերգեյ Բադասյանի դիակը:

Ավտոպատահարներ

Հունվարի 5-ին Վանաձոր-Դիլիջան ավտոճանապարհի 13-րդ կմ-ին «Օպել» մակնիշի 14 SO 161 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի մասից, բախվել ճամփեզրի արգելապատնեշին եւ ընկել ձորը:

Մինչ փրկարարների ժամանումը, քաղաքացիների կողմից ավտոմեքենայից դուրս են բերվել վարորդ, 1984 թ. ծնված Գագիկ Պողոսյանի դիակը եւ ուղեւորներ՝ 1984 թ. ծնված Հայրապետ Գրիգորյանն ու 1978 թ. ծնված Գեորգի Ցականյանը, որոնք տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր:

***

Հունվարի 8-ին Երեւանի Դավթաշենի կամրջի վրա իրար են բախվել «ՎԱԶ-2108» մակնիշի 65 SS 258 պետհամարանիշով ավտոմեքենան եւ «ԳԱԶԵԼ» մակնիշի 04-46 S պետհամարանիշով թիվ 115 երթուղային տաքսին:

Պատահարի վայր մեկնած փրկարարները «ՎԱԶ-2108» մակնիշի ավտոմեքենայից դուրս են բերել վարորդ՝ Գոռ Մագումյանի եւ ուղեւոր՝ Լիլիթ Խաչատրյանի դիերը, իսկ երթուղային տաքսու ուղեւորներից վնասվածք ստացածները տեղում ստացել են առաջին բուժօգնություն:

***

Հունվարի 15-ին Կապան-Երեւան ավտոճանապարհի 25-րդ կմ-ին «Կամազ» մակնիշի 57 SU 574 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ հարվածել բետոնե պատնեշին, ինչի հետեւանքով 1977 թ. ծնված Աշոտ Աթանեսյանը եւ 1942 թ. ծնված Ալֆրեդ Ուլիխանյանը տեղում զոհվել են:

Փրկարարները զոհվածների դիերը դուրս են բերել ավտոմեքենայից:

Սողանք

Սյունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ հունվարի 21-ին Քարահունջ գյուղում տեղի է ունեցել ցանկապատի փլուզում:

Տեղում պարզվել է, որ փլուզվել է Վ. Մկրտչյանին պատկանող տան քարե ցանկապատը՝ 24 քմ մակերեսով, եւ դարպասը, ինչպես նաեւ վնասվել են հարեւանների ցանկապատերը:

Ըստ նախնական տվյալների՝ փլուզումը տեղի է ունեցել գրունտի սողանքի հետեւանքով:

Հրդեհներ

Դեկտեմբերի 31-ից մինչեւ հունվարի 21-ն ընկած ժամանակահատվածում հանրապետության տարածքում գրանցվել է տարբեր բնույթի հրդեհների բռնկման 83 դեպք:

Այրվել է ձեղնահարկը

Դեկտեմբերի 31-ին Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի բնակիչ Թաթոյանի տանը բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են 170 քմ մակերեսով ձեղնահարկը, 500 հակ անասնակերը եւ 8 խմ աթարը: Հրդեհաշիջմանը մասնակցել է երկու մարտական հաշվարկ:

...Տանիքներ

Հունվարի 2-ին Արարատի մարզի Արարատ գյուղի Իսահակյան փողոցի 18 տանը բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են տանիքը՝ 200 քմ մակերեսով, եւ խոհանոցի՝ 10 քմ մակերեսով առաստաղը:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

>>> 5

սեյսմիկ պաշտպանություն

Հունվարի 15-21-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանում եւ հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են երկու երկրաշարժ: Հունվարի 16-ին Գառնի գյուղից 10 կմ հյուսիս-արեւելք տեղի է ունեցել թույլ երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ: Նույն օրը Հայաստան-Իրան սահմանային գոտում, Մեղրի քաղաքից 34 կմ հարավ-արեւելք, գրանցվել է 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Ստորգետնյա ցնցումները զգացվել են Մեղրիում՝ 3 բալ ուժգնությամբ:

Տարածաշրջանում. գրանցվել է 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկու երկրաշարժ: Երեք բալանոց սեյսմիկ ցնցումները տեղի են ունեցել հունվարի 16-ին եւ 19-ին Վրաստանի տարածքում, մայրաքաղաք Թբիլիսիից համապատասխանաբար՝ 25 կմ եւ 22 կմ հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. տեղի է ունեցել 6 եւ ավելի մագնիտուդով վեց ուժեղ երկրաշարժ, որոնք գրանցվել են խաղաղօվկիանոսյան օղակաձեւ հրե գոտում: Նշված ժամանակահատվածում Նոր Կալեդոնիայի կղզիների հարավ-արեւելյան շրջանում գրանցվել է չորս ուժեղ երկրաշարժ, որոնք ունեցել են համապատասխանաբար 6,7, 6,5, 6,0 եւ 6,3 մագնիտուդ: Հունվարի 15-ին 7,4 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել Ռուսաստանի Կուրիլյան կղզիների արեւելյան մասում, Սեւերոկուրիլսկ քաղաքից 430 կմ հարավ: Երկրաշարժը զգացվել է Ռուսաստանի դաշնության մի շարք բնակավայրերում, մասնավորապես Կամչատկայի Պետրոպավլովսկում, Սեւերոկուրիլսկում, Յուժնոկուրիլսկում եւ Մալոկուրիլսկում՝ 3 բալ ուժգնությամբ: Հունվարի 18-ին Նոր Զելանդիայից 1000 կմ հեռավորության վրա գրանցվել է ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 6,4 մագնիտուդ: Երկրաշարժերի հետեւանքով զոհեր եւ ավերածություններ չկան: Ցունամի չի առաջացել:

ՍՊԱԾ գործակալություն

շտապօգնություն 1-03 Երևան

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 3667 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 413 մարդ: Եղել է մանկական 232 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 36 երեխա:

Գրանցվել են 72 մահ եւ 9 դժբախտ պատահար:

Հունվարի 15

Շահումյան 16 փողոցի 136 տան բնակիչ, 20-ամյա Ա. Հակոբյանը թունավորվել է գազից եւ բուժօգնություն ստանալուց հետո հրաժարվել հիվանդանոց տեղափոխվելուց:

«Արաբկիր» բժշկական կենտրոնի ընդունարանից քիմիական նյութից թունավորումով թիվ 2 համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել 4 տարեկան մի երեխա:

Հունվարի 16

Գրիգոր Լուսավորչի փողոցից բազմակի վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել վրաերթի ենթարկված 40-ամյա Վ. Ներսիսյանը:

«Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնից դանակահարման հետեւանքով գլխի փափուկ հյուսվածքների վերքերով «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 51-ամյա Ս. Մկրտումյանը:

«Ոսկե ձկնիկ» ռեստորանի մոտ վրաերթի է ենթարկվել եւ բազմակի վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխվել 28-ամյա Հ. Պետրոսյանը:

Դեղորայքի թունավորումից մահացել է Նաիրի Զարյան 4 հասցեում բնակվող 50-ամյա Մ. Եղիազարյանը:

Հունվարի 17

Ժավելի սպիրտից թունավորվել է Մազմանյան 12 շենքի բնակիչ, 73-ամյա Մ. Ենոյանը, որը ստանալով առաջին բուժօգնություն, հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվելուց:

Հունվարի 19

Մանկավարժական ինստիտուտի մոտ վրաերթի է ենթարկվել 16-ամյա Հ. Պողոսյանը, որը գանգուղեղի վնասվածքով տեղափոխվել է «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Հունվարի 20

Դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել Նորվեգական թաղամասի բնակիչ, քսանհինգամյա Ա. Միրզախանյանը եւ Շարուրի փողոցի հասցեներից մեկում բնակվող տասնհիններամյա Ս. Մաթեւոսյանը:

Հարավ-արեւմտյան Բ1 թաղամասի 59 հասցեից «Մալաթիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել դանակահարված 57-ամյա Ռ. Աբալյանը:

եղանակի տեսություն

Հունվարի 17-22-ը Հանրապետությունում դիտվել է առանց տեղումների եղանակ, միայն 21-ին տեղ-տեղ գրանցվել է թույլ ձյուն:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Տավուշում եւ Սյունիքի հովիտներում՝ +7...+12, Լոռիում +4...+8, Արարատյան դաշտում՝ 0...+2, Սյունիքի նախալեռներում եւ Արցախում՝ +5...+10, լեռնային շրջաններում՝ 0...-5 ºC:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է. լեռնային շրջաններում՝ -17...-12, Լոռիում՝ -10...-15, Արարատյան դաշտում՝ -13...-18, Տավուշում, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ -5...-10 ºC:

Հունվարի 23-27-ը հանրապետության տարածքը կգտնվի անտիցիկլոնի ազդեցության գոտում, սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին հարավ-արեւմտյան՝ 2-7 մ/վրկ: Մինչեւ հունվարի 25-27-ը օդի ջերմաստիճանը կբարձրանա 4-6 աստիճանով:

Սպեղծագործում են ուսանողները

Վրույր Թադեւոսյան
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի 3-րդ կուրս

Խոնավ մանկություն

Մինչեւ հիմա էլ հիշում եմ խոնավության հոտը… հիշում եմ խուլ պայթյուններն ու գույնզգույն լույսերը, որ տեսնում էի երկնքում… այնքան հրաշալի էր, երբ նայում էի երկնքին ու հափշտակված փորձում որսալ բոլոր «կարմիր աստղերը» (փոքր ժամանակ այդպես էինք կոչում երկնքում երեւացող արկերը): Բայց ուրախությունը երկար չէր տեւում, հիմա մայրիկս բարձր ու ահաբեկված ձայնով ինձ կանչելու է, ու բոլորս վազելու ենք ապաստարան: Ես չէի հասկանում՝ ինչու չեն թողնում հանգիստ նայեմ, թե ինչպես են «թուրքերը» կարմիր աստղեր նետում երկինք:

Վազում նստում եմ ապաստարանի մեր անկողնում՝ քրոջս մոտ: Դա իմ ու քույրիկիս անկողինն էր: Այդ ժամանակ երեք կամ չորս տարեկան էի, բայց նույնիսկ վերմակիս գույնն եմ հիշում. կարմիր վերմակ էր՝ մոխրագույն վարդերով: Շատ վատ վերմակ էր, չէր տաքացնում: Անընդհատ ցուրտ էր, ու մենք շորերով էինք՝ գիշեր, թե ցերեկ: Մայրիկս անհանգիստ է. հարեւաններից մի քանիսը սովորականի նման չէին եկել մեր ապաստարան: Անընդհատ ներսուդուրս է անում. ապաստարանի դուռն էլ ղռռոցով է բացվում, որովհետեւ խոնավությունը նույնիսկ այդ դուռն էր տծեւացրել:

Ձեռքս գլխիս տակ դրած պառկած ուշադիր նայում եմ մեր հարեւան տատիկ-պապիկներին: Մեր անկողնու դիմաց վառարանն է դրված, իսկ դրա մոտ նստած է Արաքսի տատիկը. միշտ մայրիկիս հարցնում էի. «Խի՞ ա Արաքսի տատը մեր ապաստարան եկել: Թող քյնա իրանց ապաստարան ըլի, մերիցը համ լյավնա, համ էլ իրանցը

պատի մեջինա»: «Դե ծենդ կտրի, - ասում է մայրիկս, - էսա քեզ եմ տյուս քցիլ, վեր քյնաս ճամփըմը մենակ կաղնես»: Ու ես, առանց այդ էլ վախկոտ, մենակ մնալու հեռանկարից ավելի էի սարսափում: Մայրիկս ինչու՞ էր զայրանում, համ էլ ես ցածրաձայն էի ասում…

Արաքսի տատիկի կնճռոտված դեմքն անթարթ աչքերով մի կետի է նայում, ու՞ր է նայում… վիզս ձգում եմ, բայց շատ մութ է նկուղում. վառարանի ծայրին դրված ճրագն է միայն լուսավորում մեր «սենյակը»: էհ, միեւնույն է ոչինչ չեմ տեսնում… մեկ էլ մի ուժեղ թխկոց է լսվում, բոլորը վախեցած վեր են թռչում. բայց դա կրակոց չէր, մեր մյուս հարեւանն էր, որ հայրիկի հետ թախտի տակ էր մտել: Դա նրանց տեղն էր. հայր ու աղջիկ գալիս էին, վերմակով փաթաթվում ու մտնում թախտի տակ. նրանց համար դա ամենապահով տեղն էր: Իսկ այդ թխկոցը… աղջիկը շրջվելու ժամանակ գլուխը խփել էր… Ես սկսեցի ծիծաղել կչկչալով, իսկ Արաքսի տատը. «վենց վախծա աղչի է…»: Թախտի վրա էլ անկեղծ ասած, հիմա չեմ հիշում, որ հարեւաններն էին, բայց մի քանի հոգով էին, կռացան նայելու՝ հո բան չպատահե՞ց:

Ամեն ինչ հանդարտվեց: «Ու՞ր ա է մամայս», համարյա լացակումած հարցրի ես: Ուզում էի վեր կենալ անկողնուց, բայց հանկարծ տրորեցի քրոջս ոտքն ու… մի հարված կերա գլխիս… չէի կարող պատասխանել, որոհետեւ էլ ավելի ուժեղ հարված կուտեի… Սկսեցի տզզալ… Մեկ էլ ինձ ու ինձ հանդարտվեցի ու նստած մնացի: Իմ մեջքի կողմից պատին հենած տախտակ կար: Խոնավությունից պաշտպանված էի: Մեկ էլ դուռը ղռռոցով բացվեց, ու ներս մտավ մայրիկս՝ ժպիտը դեմքին: Էլի մի զավեշտալի պատմություն է պատմելու մամաս. ամեն անգամ, երբ նա դրսից գալիս է, անցուդարձին սկսում ենք ծանոթանալ «առաջին ձեռքից»:

«Արաքսի տոտա, վեր գիդաս ինչ ա ըլել… Հենց կրակոցնին սկսվել ա, էս Արփոն վազտալով իրանց տանիցը տյուս ա թռել, ու մտել ա մեր զուգարանը»: Բոլորը սկսեցին ծիծաղել. մեր զուգարանը այգում էր, մոտ 100 մ հեռու Արփենիկ տատիկենց տնից: Երեւի Արփենիկ տատիկը գիտեր, որ մեր կողմ պետք է վազի, բայց այդ պահին զուգարանն ավելի մոտիկ է եղել… «Աղչի, փոխանակ ապաստարանի վրա վազ տամ, դյբա զուգարան քյնացի, - ասում է Արփենիկ տատիկն ու աչքերը լցվում են, հայացքը խեղճանում է, ու ցուցամատով աչքերը չորացնում է, - բա քիչ չի մտել եմ զուգարան, մեկ էլ տյուռը պինդ փռնել եմ մեջղոլիցը», - ու ինքն իր արածի վրա ծիծաղում է:

Էլի լռություն տիրեց, բայց ես դեռ նստած եմ: Մեկ էլ մտքովս հերթական հիմար միտքն է անցնում. ձեռքս պարզեցի ու արմունկով մի ուժգին հարված հասցրի հետեւիս տախտակին: Ուժգին ձայն դուրս եկավ, ու բոլորը վախեցան: Թախտի տակից հայհոյանքներ լսվեցին. նրանց թվաց, թե թուրքերն են կրակում: Ես հրճվում էի, ու հենց որ փոքր ինչ լռություն էր տիրում, էլի նույն «հերոսությունն» էի կրկնում: «Ապերո՞, արա էդ վենց վախծրիր մեզ», - լսվեց թախտի տակից…

Ինձ թվում էր, թե օրերով ապաստարանում մնալը պարտադիր ու սովորական բան է: Օդը խոնավ էր ու ծխոտ, օրերը կարճ էին, գիշերները երկար ու հետաքրքիր: Աշխարհի մասին գրեթե ամեն բան ապաստարանում եմ սովորել՝ հավաքվողների իրական ու մի քիչ էլ գունազարդված պատմություններից: Ու ամեն ինչ միշտ պատկերացնում էի ծխոտ, խոնավ, տհաճ ղռռոցներով, վախով ու փսփսոցով, լացով ու ծիծաղով…

Հ.Գ. Երբ գրի էի առնում հիշողություններս, հասկացա, որ մինչեւ հիմա էլ չգիտեմ, թե ինչու էր Արաքսի տատիկն իրենց ապաստարանը թողած, մեր ապաստարանում թաքնվել: «Արա, բա իրանց ապաստարանը պատի միջին էր փորած, - հեռախոսով պատմում է մայրս, բա վեր հանկարծ հողը վերյառնար կլխներին…»: Իսկապես, չէ որ Արաքսի տատիկենց տնից երկու տուն վերեւ «գրադ» էր ընկել, ու ամբողջովին ավերել այդ տունը… Հողը կցնցվեր, ու… էհ, ինչ իմանայի, ախր շատ փոքր էի…

Արագության փոխարեն մեծացրեք ուշադրությունը

Ջյունածածկ ճանապարհներ եւ մերկասառույց՝ գումարած մեքենայի արագության գերազանցում, սրանք ավտովթարի հիմնական պատճառներն են տարվա այս եղանակին: Ճանապարհատրանսպորտային պատահարներից խուսափելու համար ճանապարհային ոստիկանությունը հորդորում է վարորդներին նախեւառաջ փոխել մեքենայի անվադողերը, արագության փոխարեն մեծացնել ուշադրությունը եւ ամենակարեւորը՝ պահպանել երթեւեկության կանոնները:

Նախորդ տարիների համեմատ այս տարվա առաջին երկու շաբաթվա ընթացքում ավտովթարների թիվը Հայաստանում նվազել է, տեղեկացնում է Ճանապարհային ոստիկանության ՊՀՎ բաժնի պետ Հայկ Սարգսյանը: Հանրապետությունում տեղի է ունեցել 36 ճանապարհատրանսպորտային պատահար, որոնց հետեւանքով զոհվել է 7 մարդ, տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներ են ստացել 56-ը:

Ճանապարհներին տեղի ունեցող արտակարգ պատահարների հիմնական պատճառն այս եղանակին վարորդների կողմից ճանապարհային պայմանները ճիշտ չգնահատելն է:

- Ցանկացած պահի, երբ ճանապարհը չոր է, կարող է հայտնվել սառցապատ, մերկասառույցով պատված ճանապարհահատված: Բնականաբար, վարորդներն անմիջապես արգելակում են նման դեպքում եւ հայտնվում երթեւեկության համար ոչ նպաստավոր պայմաններում, կորցնում մեքենայի կառավարումը, - նկատում է Հայկ Սարգսյանը:

Տարվա այս ամիսներին վարորդները պետք է հատկապես ուշադիր լինեն շրջադարձերին, խաչմերուկներին, էստակադաներին ու կամուրջներին մոտենալիս, քանի որ վերջիններս համեմատաբար ավելի շուտ են սառցակալում, խորհուրդ է տալիս Ճանապարհային ոստիկանության առաջին սպայական գումարտակի ծառայության ավագ տեսուչ Արսեն Մարդոյանը: Նա վարորդների ուշադրությունն է հրավիրում Դավիթաշենի կամուրջին, քանի որ այստեղ 2009-ի սկզբին մահվան ելքով ավտոպատահար գրանցվեց:

- Դավիթաշենի կամուրջը լուրջ հանգույց է, որը կապում է Կոմիտասի պողոտան մի ամբողջ թաղամասի հետ, եւ երթեւեկության ինտենսիվությունը բավական բարձր է այստեղ: Կամուրջի մոտ տեղադրված են արագության իջեցման նշաններ, նույնիսկ երկու անգամ վարորդին զգուշացվում է, որ պիտի երթեւեկի՝ սահմանված արագությունը իջեցնելով մինչեւ 40 կմ/ժ, - ասում է Մարդոյանը:

Ավագ տեսուչը համոզված է, որ ավտովթարների թիվը կտրուկ կնվազի, եթե վարորդները անհարկի չզբաղեցնեն ձախ եզրային գոտին, այլ երթեւեկեն աջ եզրով ինչպես կամուրջներին, այնպես էլ մյուս ճանապարհներին: Խորհուրդ է տրվում նաեւ ուշադիր լինել նորակառույց ճանապարհներին եւ կատարել տեղադրված նշանների պահանջները: Օրինակ՝ Արմենակյան փողոցից դեպի Ավետիսյան տանող ճանապարհին կան կտրուկ՝ ոլորանների նմանվող հատվածներ, որտեղ վարորդները պիտի աչալուրջ լինեն եւ ուշադրությունը կենտրոնացնեն հիմնականում մեքենայի արագությունը նվազեցնելու վրա: Ճանապարհի այն հատվածը, որը մոտենում է էստակադային, թեքվում է աջ եւ ունի փոքրիկ կոր, որը շատ հաճախ որոշ վարորդներ չեն կարողանում հաղթահարել մեքենայի արագությունը գերազանցելու պատճառով:

Վարորդներն արագությունը հաճախ չարաշահում են հատկապես Իսակովի պողոտայում, ինչն էլ հանգեցնում է ավտովթարների: Արսեն Մարդոյանը նշում է, որ Երեւանյան լճին հաջորդող էստակադան ցածր ջերմաստիճանի պայմաններում հաճախ պատվում է մերկասառույցով, իսկ արագ ընթացող մեքենան, հանդիպելով նման խոչընդոտի, շատ հեշտ կարող է կորցնել կառավարումը:

- Իսակովի պողոտայի վերջնամասում, արդեն դեպի Արգավանդ տանող ճանապարհայատվածի վրա նույնպես բավական երկար թռիչքով էստակադա է կառուցված, որը ձմեռվա պայմաններում նույն խնդրի առջեւ կարող է կանգնեցնել վարորդին, - Իսակովի պողոտայով երթեւեկող վարորդներին հիշեցնում է Արսեն Մարդոյանը եւ մեկ անգամ էլ հիշեցնում՝ իջեցնել մեքենայի արագությունը եւ երթեւեկել աջ եզրային գոտիներով:

Ճանապարհատրանսպորտային պատահարներից խուսափելու համար ճանապարհային ոստիկանությունը զգոնության կոչ է անում ոչ միայն վարորդներին, այլեւ հետիոտններին՝ պահանջելով օգտվել վերգետնյա եւ ստորգետնյա անցումներից: Հարկ է գիտակցել, որ հատկապես ձմռանը ցանկացած տեղում ճանապարհ անցնելը վտանգում է հետիոտնի կյանքը:

Մանե Գրիգորյան

հանրային առողջություն

Գրիպ կամ ֆսֆսացող քթերի սիմֆոնիա

<<< 3 ***

Հունվարի 16-ին Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է Թ. Դավթյանին պատկանող տան՝ 120 քմ մակերեսով տանիքը:

...Անասնագոմի տանիքներ

Հունվարի 8-ին Կոտայքի մարզի Զովք գյուղի սկզբնամասում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են Ա. Քոչարյանի անասնագոմի՝ 400 քմ մակերեսով տանիքը եւ 200 հակ խոտը:

***

Հունվարի 15-ին Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղում այրվել են Ն. Սիմոնյանի անասնագոմի՝ 30 քմ մակերեսով տանիքը եւ պահեստավորած 3 տոննա խոտը:

...Վագոն-տնակներ

Դեկտեմբերի 31-ին Շիրակի մարզի Ազատան գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել են Վ. Ենգոյանին պատկանող 2 վագոն-տնակները՝ 36 քմ մակերեսով: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհաշիջման ժամանակ տնակներից մեկում հայտնաբերվել է ՌԴ քաղաքացի, 1936 թ. ծնված Անդրեյ Նեգաեւի այրված դին:

...Ննջասենյակ

Հունվարի 10-ին Երեւանի Շահումյան 35-րդ փողոցի 40 տանը այրվել են ննջասենյակի հատակը, պահարանը եւ մահճակալը: Հրդեհի հետեւանքով աջ ձեռքի այրվածքով «Մալաթիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 1991 թ. ծնված Կ. Մուրադյանը, որը ստանալով առաջին բուժօգնություն, դուրս է գրվել հիվանդանոցից:

...Մարագ

Հունվարի 10-ին Արարատի մարզի Գետափնյա գյուղի 9-րդ փողոցի 7 հասցեում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են Ե. Ադամյանի տանը կից 40 քմ մակերեսով մարագը եւ 3 տոննա խոտը:

...Հաշվիչներ

Հունվարի 19-ին Երեւանի Սունդուկյան փողոցի 17 շենքի 1-ին մուտքի էլեկտրական վահանակում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են մալուխներն ու 9 հաշվիչ:

ԼՂՀ ՓԾ լրատվական կենտրոն

Հունվարի 13-ին Մարտակերտի շրջանի Զարդախաչ գյուղի բնակելի տներից մեկում բռնկված հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել է երկհարկանի մի տուն:

***

Հունվարի 17-ին հրդեհ է բռնկվել Քաշաթաղի շրջանի Միջնավան համայնքի չոր խոտածածկույթներում: Այրվել է 4 հա եղեգնուտ:

***

Հունվարի 20-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Ալեք Մանուկյան փողոցի 13 բնակելի շենքի նկուղային հարկում: Այրվել են ոչ պիտանի իրեր եւ աղբ:

Ավտոպատահար

Հունվարի 10-ին Ստեփանակերտի Ազատամարտիկների փողոցում, ԼՂՀ ԱԳՆ շենքի դիմաց իրար են բախվել «Օպել» եւ «Նիվա» մակնիշի մեքենաներ: Բախման հետեւանքով «Նիվա» մեքենայի վարորդ, 1980 թ. ծնված է. Ադամյանը վնասվածքներով տեղափոխվել է Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոց:

Ըստ բժիշկների գնահատման՝ տուժածի վիճակը բավարար է:

Նաիրա Եղիազարյան

Շնորհակալություն

Հունվարի 14-ին բնակարանիս դռան փականը փչանալու պատճառով չէինք կարողանում մուտք գործել բնակարան: Դիմեցի փրկարար ծառայության փրկարար ջոկատի օգնությանը: Այդ օգնությունը չուշացավ, եւ կես ժամվա ընթացքում փրկարար խումբը՝ մասնակցությամբ լեյտենանտ Հայկ Նիկողոսյանի, ենթասպաներ Արման Սարգսյանի եւ Զուրաբ Վարդանովի, Երեւանի Չարբախ թաղամասից հասան Երեւանի Ավան-Առինջ թաղամասի մեր բնակարանը: Նրանց հմուտ եւ մասնագիտական գործողությունները երկար չսպասեցրին մեզ: Բացեցին դուռը՝ կարելի է ասել անկրկնելի հմտությամբ 7-րդ հարկից պարանի օգնությամբ մտնելով 6-րդ հարկում գտնվող մեր բնակարանը:

Խորին երախտագիտությունս եւ շնորհակալությունս եմ հայտնում այդ անձնվեր փրկարարներին:

Շահեն Սարգսյան
Երեւանի Ավան-Առինջ թաղամասի, 2-րդ մ/շ 2/10 շենքի 9-րդ բնակարանի բնակիչ

Ասում են՝ գրիպը, եթե բուժում ես, տեւում է մեկ շաբաթ, եթե չես բուժում՝ 7 օր: Ասում ենք՝ գրիպի դեպքում կարեւորը ոչ թե հիվանդության տեւողությունը սրբագրելն է, այլ՝ հետագա բարդություններից խուսափելը:

Եթե ձեր ջերմությունը բարձրացել է, դող, մկանացավ, գլխացավ եւ քթից արտադրություն ունեք, ապա շնորհավորում ենք, դուք գրիպ եք: Որոշ դեպքերում գրիպին բնորոշ են նաեւ քթից արնահոսություն, կոնյուկտիվիտներ, աչքերի բորբոքում: Մի շտապեք ինքներդ ձեզ մխիթարել, թե գրիպը բարդ հիվանդություն չէ: Գուցե եւ դրա ընթացքը վտանգավոր չէ, բայց հետեւաքները կարող են մտահոգիչ լինել: Շտապօգնության ավագ բժշկուհի Ռիտա Աբրահամյանի հավաստմամբ՝ գրիպի պատճառով կարող են առաջանալ թոքաբորբ, օտիտ՝ ականջի բորբոքում, բրոնխիտ՝ շնչառական ուղիների հիվանդություն, միոզիտ՝ մկանների բորբոքում, միելիտ՝ ողնուղեղի բորբոքում, մենինգիտ եւ էնցեֆալիտ՝ գլխուղեղի բորբոքում, սրտանոթային համակարգի ախտահարում եւ այլ՝ մեկը մյուսից վախենալու անվանումներով հիվանդություններ: Հնարավոր է նաեւ Ռեյեի սինդրոմ կոչվող բարդությունը, որը հանդիպում է միայն երեխաների մեջ եւ ուղեկցվում է փսխումներով, ուղեղի զեղումով ու կոմայով:

Գրիպը սիրում է, որ իրեն լուրջ վերաբերվեն: Պետք չէ բարձր ջերմությունով եւ ֆսֆսացող քթով տնից դուրս գալ ու շտապել այնտեղ, ուր շատ մարդ կա:

- Գրիպի ժամանակ պետք է անպայման կազմակերպել բժշկի այց: Պետք չէ գնալ մանկապարտեզ, դպրոց, բուհ, աշխատանքի, մասնակցել զանգվածային միջոցառումների, որպեսզի հիվանդությունը չբարդանա, ու ինքներդ էլ չդառնաք ուրիշներին վարակելու աղբյուր, - ասում է Առողջապահության նախարարության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության գլխավոր մասնագետ, համաճարակաբան Լիանա Թորոսյանը:

Բժշկուհի Ռիտա Աբրահամյանը պարզաբանում է, որ գրիպը միանգամից չի անցնում, նույնիսկ բարդություն չլինելու դեպքում այն տեւում է մի քանի օր: Պետք է հետեւել բժշկի ցուցումներին, խմել նրա նշանակած դեղերը, վիտամին C, օգտագործել շատ հեղուկ: Չի կարելի ինքնագլուխ կերպով բժշկական կրթություն չունեցող հարեւանի ու բարեկամի խորհուրդ տված դեղամիջոցներն ընդունել: Ամեն մի դեղ չէ, որ կարող է հաղթել գրիպին:

- Մարդկանց մեջ սովորություն կա գրիպի հենց առաջին օրը միանգամից հակաբորբոքիչ (անտիբիոտիկ) խմել: Դա շատ սխալ է, կարող է դիզբակտերիոզ առաջանալ: Անտիբիոտիկը գրիպի վիրուսի դեմ ոչինչ անել չի կարող: Անտիբիոտիկ նշանակում է բժիշկը, եթե կա բարդություն, բորբոքային պրոցես, - ասում է բժկուհին:

Բազմազան ու բազմահրաշ դեղեր խմելու փոխարեն ավելի լավ է՝ բացեք ձեր մառաններում ու պահարաններում թաքցրած մուրաբաները եւ որքան կարող եք՝ շատ թեյ խմեք:

Եթե գրիպ ընկնելու հավես ու ժամանակ չունեք, ապա ավելի լավ է հետեւեք մի քանի կանոնի. հաճախակի լվացեք ձեռքերը, խուսափեք գրիպով հիվանդի հետ շփվելուց, եթե տանը գրիպով հիվանդ կա՝ կրեք շնչադիմակ եւ հագնվեք եղանակին համապատասխան:

Հիգիենայի կանոններին ճիշտ հետեւելը նույնպես շատ կարեւոր է: Գրիպի ժամանակ պետք է օգտագործել թաշկինակներ եւ անձեռոցիկներ: Քիթ սրբելու այլ եղանակները՝ ձեռքեր, հագուստի թեւք եւ այլն, չեն խրախուսվում:

Առողջապահության նախարարության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության տեղեկացմամբ՝ այս տարի գրիպի համաճարակային իրավիճակի բարդացում չկա: Հիվանդության սրացման պատճառով շտապօգնություն կանչելու դեպքերն էլ, համեմատած նախորդ տարիների հետ, քչացել են: Երեւանում արձանագրվող օրական մոտ 450 կանչից 20-22 են լինում «գրիպային»՝ նախկին 60-70-ի փոխարեն:

Եթե չեք ուզում հանրապետությունում գրիպի համաճարակային իրավիճակի բարդացման պատճառ դառնալ, ապա պետք է ուղղակի հիշել, որ գրիպն էլ է հիվանդություն:

Կերեք-խմեք՝ առանց թունավորվելու

Նույնիսկ ամենամեծ ախորժակով կերած ուտելիքը կարող է անախորժություններ պատճառել, եթե չեն պահպանվել սնունդը պահելու եւ պատրաստելու կանոնները: Որպեսզի ամենամեծ հաճույքներից մեկը՝ ուտելը, չվերածվի տհաճության եւ սննդային թունավորումների, սննդի միջոցով տարածվող վարակիչ հիվանդությունների ու աղիքային խանգարումների պատճառ չդառնա, պետք է կատարել Առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության սնուցման եւ սննդամթերքի անվտանգության բաժնի պետ Մարգարիտա Բաբայանի խորհուրդները:

1. Սնունդ պատրաստելիս, մատուցելիս եւ ուտելիս պարտադիր ձեռքերը մանրակրկիտ լվանալ:

2. Մինչեւ պատրաստելը կամ մատուցելը հոսող ջրի տակ լավ լվանալ սնունդը (օգտագործելուց առաջ նույնիսկ ձուն լվանալը պարտադիր պայման է՝ կեղեւին հավաքված մանրէները վերացնելու համար: Սննդի պատրաստման համար անհրաժեշտ է օգտագործել մաքուր ջուր: Եթե կասկածներ կան դրա մաքրության վերաբերյալ, ապա պետք է այն օգտագործելուց առաջ եռացնել):

3. Մթերքը սառնարանում պետք է պահել հատուկ կանոններով եւ պլյուս 5-ից ցածր ջերմաստիճանում: Չի կարելի իրար վրա կամ իրար կողքի լցնել տարբեր ծագումեր ունեցող սննդամթերք, հատկապես սխալ է իրար մոտ պահել հում եւ պատրաստի մթերքը. հարկավոր է դրանք տեղադրել սառնարանի առանձին դարակաշարերի վրա. հումը՝ ներքեւում, պատրաստին՝ վերեւում: Սնունդը սառնարանում պիտի պահվի փակ վիճակում, առավել նպատակահարմար են պլաստմասսայե տարաները, որոնք սակայն պիտի անպայման նախատեսված լինեն հենց սննդի համար: Եթե միսը նախատեսվում է պահել շատ երկար՝ օրինակ շաբաթներ կամ ամիսներ, ապա ջերմաստիճանը սառցարանում պիտի լինի ամենաքիչը մինուս 20 աստիճան: Աղցանները պետք է պահել՝ կիսապատրաստի վիճակում, իսկ ձեթը, քացախը, մայոնեզը կամ թթվասերն ավելացնել մատուցելուց առաջ:

4. Վաղօրոք պատրաստված սնունդն օգտագործելուց առաջ պետք է լավ տաքացնել՝ ջերմաստիճանը հասցնելով 70-ից ավելի: Մինչեւ 70 աստիճան ջերմության պայմաններում մանրէները սննդի մեջ պահպանվում ու բազմանում են՝ ստեղծելով սննդային թունավորումների եւ տոքսիկոինֆեկցիաների առաջացման վտանգ: Պետք է նաեւ համոզվել, որ սննդի բոլոր շերտերում է ջերմաստիճանը 70-ից բարձր:

5. Մատուցված սնունդը պետք է անմիջապես ուտել, որովհետեւ սառչելու եւ սենյակային ջերմաստիճանում երկար մնալու հետեւանքով դրանում կարող են մանրէներ բազմանալ:

6. Խոհանոցային պարագաները պետք է անթերի մաքուր լինեն, դրանց համար նախատեսված սրբիչները՝ նույնպես: Կարեւոր է նաեւ, որ օրինակ՝ հում մթերքի, ձվի, մսի հետ շփված դանակներն ու մասնատման տախտակները չօգտագործվեն պատրաստի եւ այլ սննդատեսակների մշակման համար:

7. Սննդամթերքն անհրաժեշտ է պահպանել միջատներից, կրծողներից ու կենդանիներից, քանի որ դրանք ախտածին մանրէներ փոխանցողներ են եւ կարող են նպաստել սննդային գործոնով պայմանավորված հիվանդությունների տարածմանը:

8. Պետք է խուսափել հիվանդ կամ մանրէակիր մարդու կողմից սնունդը պատրաստելուց կամ մատուցելուց:

Անի Ստեփանյան

Ավագ Եփրեմյան

Բոլոր դռները

Երկրորդ մաս

2008-ին մեր թերթում տպագրվեց «Բոլոր դռները» վիպակի առաջին մասը՝ «Ավիկ Ավանեսյան» ստորագրությամբ: Ապագայի հնարավոր աղետների մասին պայմանականության լեզվով պատմելու մի փորձ է սա, որն ահա շարունակում ենք: Երկրորդ մասի հրապարակումն սկսում ենք մի փոքրիկ գաղտնիքի բացահայտումով. «Բոլոր դռների» հեղինակը՝ բանաստեղծ Ավագ Եփրեմյանը, ներկայացնում է վիպակի շարունակությունը՝ հրաժարվելով գրական կեղծանվան ծառայությունից:

... Քաղաքակրթության պատմությունը շարունակվում է՝ հաճախ հստակ չպատկերացնելով, թե որ ուղղությամբ է ընթանում եւ ինչպիսի հանգրվանի է հետամուտ: Գնալով մեծանում է վտանգը, որ ինչ-ինչ գործընթացներ կարող են անվերահսկելի դառնալ ու վերածվել իսկական աղետի:

Վիպակը ներկայացնում է հավանական ելքերից մեկը. խառնիճաղանջ այս աշխարհում հավանական է ուզածդ ելքը:

Ժամանակի հեռավոր մի կետում մոլորակի բնակչությունն ապրում է առօրյա հոգսերով: Մինչդեռ հասունացել է պահը, երբ նույն քաղաքակրթության «պարտադրմանբ» հաջորդ քայլը պիտի կատարվի: Հատե՞լ, թե՞ չհատել հնգաչափ տարածության սահմանները: Ընտրությունը դարձյալ թողնված է մարդուն: Աշխարհի ղեկավարումն ստանձնածները, ըստ էության՝ ընտրյալներ, երկընտրանքի մեջ են: Նրանք կրկնակի տառապյալներ են. պատասխանատվություն են կրում նաեւ «շարքայինների» փոխարեն: Մեծ է սխալվելու հավանականությունը: Խոսքը վերաբերում է տիեզերական, գուցե եւ՝ հիմնարար, գաղտնիքների խորքերը թափանցելու հնարավորությանը:

Փորձագետների կենտրոնի եզրակացության հիման վրա Գլխավոր խորհուրդը պիտի կայացնի Որոշում, որն օրենքի ուժով կընտրի Մոլորակի ապագան:

Փորձագետ Սյորենը՝ չի ուզում մտածել ու գործել ինչպես բոլորը: Նրան աջակցում են մտերիմները: Սյորենը փորձում է պարզել իր նախորդի՝ Անանդի անհայտացման գաղտնիքը, փորձում է հասկանալ ամբողջական ժամանակի խորհուրդը եւ այսրոպեական որոշումներ չկայացնել:

Վիպակի առաջին մասն ավարտվում է Սյորենի երազով, որը յուրատեսակ զրույց է աստղերի հետ. երկինքը հիշեցնում է, որ մարդը մոռացել է աստղերով գրված գիրը... Երազին «խառնվում» է անհայտ հեղինակի ձայնն անցյալից՝ փորձելով ամբողջացնել ժամանակի պատկերը:

Սյորենը դեռ պիտի մասնակցի աշխարհի հզորների հավաքին, պիտի հանդիպի Անանդին «առեւանգած» տիեզերական եկվորներին, որոնք նույնպես շահագրգռված են Մոլորակի ճակատագրով, դեռ պիտի... Բայց ամեն ինչ իր ժամանակին:

Սկիզբը՝ 263-273 համարներում

1.

Որովհետեւ դրանք շատ կարեւոր գրություններ են, դրանցից ավելի կարեւոր բաներ գոյություն չունեն, մանավանդ եւ որովհետեւ այլեւս ոչինչ գոյություն չունի...

Միայն գրություններ են:

Բայց ... հասկանում է, որ մոռացել է գրության մեջ գործածված բառերի նշանակությունները...

Իսկ աստղերը ուրախ ցատկոտում են...

Սակայն այսպես արտահայտվելը ոչմիտեղից դիտողին կսազեր: Իսկ դա մարդուն ընտել ուրախությունը չէր ամենեւին: Ընդհակառակը՝ մի սառնաշունչ, որպեսզի չասենք՝ դաժան, ու զուսպ ցնծություն էր, ստույգ՝ ցնծություն հիշեցնող հսկայական ալիք, որի խորքում Սյորենը շատ որոշակի մի վրեժի երանգներ էր որսում: Երանգները որսում էր, ճիշտ է, բայց դժվարանում էր հասկանալ, թե հատկապես ո՞վ էր վրիժառուն եւ թե ո՞ւմ գլխին էր թափվելու վրեժի ցասումը: Թափվելո՞ւ էր իսկապես...

Նրանք՝ աստղերը, փոխել էին իրենց վարքը... Ահա թե ինչ էր եղել:

Իրակա՞ն էին այդ պատկերները, որ հաջորդում էին իրար՝ Սյորենի ոչ այն է՝ քնած, ոչ այն է արթուն ուղեղում: Դժվարանում էր որոշել: Ոչ էլ ցանկություն ուներ, իսկն ասած, հետեւում էր պարզապես՝ հասկանալով, սակայն, որ անկիրք մի բան չէ, կարծես, իր արածը, այլ՝ գերնպատակ, բուն կյանք՝ այդ պարզապես հետեւելը: Ընդունում էր նաեւ, դրանք զարմանալի չէին թվում իրեն, չէր զարմացնում նաեւ այն կռահումը, ապա նաեւ հստակ գիտակցումը, որ աստղային այդ գիրը

մոլորակի վրա երբեւէ ստեղծված բոլոր գրություններն էր ամփոփում ահա բանականությանն անհայտ մի եղանակով:

Իսկ ականջներում որտեղից-որտեղ սկսեց հնչել անհայտ հեղինակի արդեն ծանոթ խռպոտած բարիտոնը: Քնի եւ արթնության սահմանագծին այդ ձայնն էլ կարծես գալիս էր Սյորենի առջեւ՝ վերեւո՞ւմ, թե՞ ներքեւում բացված անդունդի խորքերից, խառնվո՞ւմ, թե՞ չէր խառնվում աստղերի ցնծություն-վրեժ-գրություններին.

Եվ ես լքեցի իմ Քաղաքը... Բայց դա ոչ այնքան ինքնուրույն կոչվող քայլ կամ արարք էր՝ ինքնախաբեությամբ դրդված կեղծ ինքնահաստատման նպատակով, որքան ենթարկում կարգուկանոնին, այն կարգին, որն, անկասկած, արձանագրված էր երկնային մատյաններից մեկում կամ ուղղակի ճակատիս վրա: Իհարկե, կարող էի նաեւ չենթարկվել, մարդը չենթարկվելու հնարավորություն էլ ունի վերջապես, բայց դա հենց այն հնարավորությունն էր, որից օգտվելն ինձ դարձնելու էր ցերեկվա լույսերի մեջ կույրի պես խարխափող, ցերեկվա լույսերի հետ ճակատամարտի ելած հարյուր հազարավոր «ազատներից» մեկը...

Դա ամենահրաշալի Քաղաքն էր աշխարհիս երեսին, դա այն Ուրիշ Կյանքն էր, որը տրվում կամ չի տրվում մարդուն, որը միշտ փնտրել ու փնտրում են նրանք, ովքեր հանկարծ հասկանում են, որ Միակ Կյանքն սպառել է իրեն:

Իմ Քաղաքի միջով են հոսում երկու կատարյալ գետեր՝ Ողը եւ Վաչը՝ փոքրը, որն ամեն օր ծնվում է Կրտսեր Լեռան ստորոտում՝ սնվելով գագաթի ձյուներից: Քաղաքի կենտրոնում նա խառնվում է Ողին ու միասին, ի վերջո, հասնում են օվկիանոսներին: Օվկիանոսներն այդ գետերում միշտ առկա են, ինչպես ժամանակն է առկա իմ ու ձեր կյանքի վայրկյանների մեջ:

Ես հավատացած էի, որ Քաղաքի եւ իմ նպատակները նույնն են, ես հավատացած էի, որ մեկն եմ նրանցից, ովքեր պիտի իրականություն դարձնեին Քաղաքի նպատակները: Որովհետեւ այդ Քաղաքում էր հայրս Էպոսը պատմել ինձ ու եղբորս՝ ձմեռվա երկար գիշերներին, որոնք ավելի երկար էին թվում մեզ՝ մանչուկներիս՝ ամուր կպած իր աջ ու ձախ կողքերին՝ վարձակալած գետնահարկում: Հայրս նման էր Էպոսի հերոսներին՝ ամենազոր ու բարի: Ես այդ ժամանակ չգիտեի, իհարկե, թե ինչ է նշանակում հավատը կամ ինչ է նշանակում զորանալը, եւ հենց այդ պատճառով էլ իմ ապրած զգացումներն ավելի զորեղ էին, քան հավատն ու իր բոլոր զորացումները: Որովհետեւ այդ զգացումները չափազանց մոտիկ էին լույսին, ու գուցե նույնիսկ կախված էին նրա ցնծուն փեշերից, ինչպես հիմա եմ հասկանում...

Բայց ահա իմ Քաղաքում ուրիշ մարդիկ էլ հայտնվեցին... ու այդուհետեւ այլեւս միշտ կային: Նրանք նման չէին հորս պատմածի մեջ ապրողներին:

Նրանց ես միանգամից չնկատեցի: Նախ ես տեսա, թե ինչպես են նրանք կամաց-կամաց, գրեթե գաղտագողի սողոսկում իմ մանկությունից ներս: Ապա գլխի ընկա, որ նրանք օրեցօր շատանում են, եւ որ՝ հենց դա է նրանց անելիքը: Դժվար չէր գլխի ընկնելը, որովհետեւ նրանք դա չէին էլ թաքցնում: Այդ հանգամանքը ստիպում էր անընդհատ ընտրություն կատարել նրանց միջեւ, ավելի ստույգ՝ դա ինքնաբերաբար էր ստացվում, եւ այդ գործողությունը՝ ընտրություն կատարելը, սպառնում էր վերածվել բուն կյանքի: Մյուս կողմից էլ՝ ճշգրիտ ընտրության հնարավորությունները խիստ սահմանափակ էին, որովհետեւ մարդիկ չափազանց շատ էին ու միանման. հայտնվում էին մեծավ մասամբ նենգելու, խորամանկելու, խաբելու...

Ոչ միայն ինձ. հիմնականում հենց իրար: Իսկն ասած, անձամբ ես մի առանձնահատուկ հետաքրքրություն չէի էլ ներկայացնում, նրանք իմ մեջ տեսնում էին հերթական մեկին միայն, իրենցից մեկին, որն աշխարհ է եկել նենգելու, խաբելու, խորամանկելու, Գետերի ափերին դարերով կուտակված աղբին իր աղբն ավելացնելու... Սարսափելի էր, ինչպե՞ս դիմացա, ճակատագրական էր այն օրը, երբ ես առաջին անգամ պարզ տեսա դա. իմ Քաղաքի, իմ Սրբազան Քաղաքի գետերը, որ Ժամանակն էին խորհրդանշում, սկսել էին նեղվել իրենց ափերին անփութորե՞ն, անփութորե՞ն թափթփված պատմության աղբահոտից... Ասում եմ՝ սկսել էին, բայց լավ գիտեմ արդեն, որ դա վաղուց էր եղել՝ այդ սկիզբը, անհիշելի ժամանակներից, գուցե՝ ժամանակից էլ առաջ... Տեսնելու իմ հերթն էր հասել: Սարսափելու եւ դիմանալու իմ հերթը: Բայց դիմացա՞մ արդյոք...

Մեղադրանք չեմ կարդում, մեղավորներ չեմ փնտրում: Ես մեղավորներ չեմ ուզում փնտրել անգամ այն գրքում, որը մեղսականության ու մեղավորների հիմքերն է դրել:

Այդուհանդերձ, սակայն, այս ամենի պատճառը, ես վստահ եմ, իմ հիշողությունն է: Ստույգ՝ այդ հիշողության տեսակը: Իհարկե, նպատակ չունեմ պարզելու, թե ինչ է հիշողությունը, ո՞րն է հիշողության էությունը, ո՞րը՝ բնույթը... չէ, այս թեմաներով փիլիսոփայելու ցանկություն չունեմ: Պարզապես մի օր նկատեցի, որ իմ հիշողության մեխանիզմն է տարբեր: Դա նույնիսկ հիշողություն էլ չէ, այլ Չմոռացում գուցե: Անհաջող անուն է, խոսք չունեմ, բայց ուրիշն այս պահին չեմ գտնում: Ու դժվար թե գտնեմ, որովհետեւ առայժմ չեմ ճանաչում նրան: Ենթադրում եմ, որ հիշողությունն արդեն գոյացած, գործի գցված կամ ընթացող, սլացող ժամանակի մանրակերտը պիտի լինի: Այսինքն՝ դեպքերը պիտի շարվեն որոշ հերթականությամբ եւ ապա պատկերանան. տեղի ունենան արդեն իբրեւ պատկերներ, եթե պիտի տեղի ունենան, իհարկե: Համաձայն եմ, պարտադիր չէ, որ այդ դեպքերը ճիշտ ու ճիշտ համընկնեն բուն ժամանակի մեջ կատարվածներին, որ դրանք կարող են նաեւ հետ ու առաջ ընկնել, բայց էլի՝ որոշ հերթականությամբ միայն: Դրանք պիտի հաջորդեն կամ նախորդեն մեկը մյուսին, կանգնեն կողք-կողքի, խմբեր կազմեն թեկուզ: Նույնիսկ երազի մեջ այդպես է...

Իսկ ահա իմ դեպքն անտանելի է: Այդպես չի լինում, այդպես սխալ է վերջապես...

Շարունակելի

Զիգզագը երկնքում

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը

Տաղանդավոր մարդը տաղանդավոր է ամեն ինչում



Մեր ընթերցողներից շատերը մտքում (կամ բարձրաձայն) կարող են հարց տալ՝ արդյոք այս լուսանկարն ինչ-որ կերպ փոխե՞լ է աշխարհը: Լինելով հանճարեղ գիտնական՝ Ալբերտ Էյնշտեյնը հեղափոխություն է կատարում միջուկային ֆիզիկայի եւ քվանտային մեխանիկայի բնագավառներում, իսկ այս լուսանկարը հեղաշրջում է կատարում ոչ միայն Էյնշտեյնի, այլեւ գիտնականների նկատմամբ ունեցած մարդկանց վերաբերմունքի մեջ ընդհանրապես:

Բանն այն է, որ 72-ամյա գիտնականին արդեն ձանձրացրել էին Փրինսթոնի համալսարանական քաղաքում իրեն անվերջ հետապնդող համառ, ավելի ճիշտ՝ աներես լրագրողներն ու լուսանկարիչները: Եվ երբ նրան արդեն որերորդ (մոտավորապես հարյուր հազարերորդ) անգամ խնդրում են ժպտալ տեսախցիկին, լուսանկարիչ Արթուր Սեյսին Էյնշտեյնն անսպասելիորեն ցույց է տալիս իր… լեզուն: Բայց դա ոչ թե սովորական, այլ՝ հանրահայտ գիտնականի լեզու էր: Այդ պատճառով այս լուսանկարը մեկ ակնթարթում հայտնվում է դասականների շարքում:

Դրա շնորհիվ այժմ եւ միշտ Ալբերտ Էյնշտեյնին կհիշեն ոչ միայն որպես աշխարհի ամենախելացի գիտնականներից, այլեւ՝ որպես առանձնահատուկ հումորի զգացում ունեցող մարդկանցից մեկը:

Հեռու ցրտից ու տնտեսական ճգնաժամից

Տուն չկա՝ հյուրանոցում կապրեք

Ցուրտն ու տնտեսական ճգնաժամը, պարզվում է, որ կարող են ունենալ նաեւ դրական հետեւանքներ. մարդկանց դարձրել ավելի հանդուրժող ու բարի:

Օրինակ, բելգիացի մի հյուրանոցատեր, առանց որեւէ վարձավճարի, երեքաստղանի հյուրանոցի դատարկ սենյակներում է հյուրընկալել անտուն մնացած 50 մարդու: Հյուրանոցը բելգիական մայրաքաղաքի պատմական շրջանում է եւ զբոսաշրջիկների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Բայց բիզնեսը բիզնես է, մարդասիրությունը՝ մարդասիրություն... Մինչեւ հունվարի վերջ հյուրանոցի 20 սենյակները կլինեն թափառաշրջիկների տրամադրության տակ: Ի դեպ, սա ձմռան ամենացուրտ շրջանն է համարվում: Հյուրանոցի սեփականատերը կոչ է արել մյուս հյուրանոցատերերին եւս հետեւել իր օրինակին: Բանն այն է, որ հունվարին զբոսաշրջիկների հոսքը Բրյուսել այնքան էլ մեծ չէ, եւ թափառաշրջիկներին տանիք տրամադրելը խելքին մոտ, նաեւ անվնաս բան է: Անտուններին տնավորելու գործը ստանձնել է Սոցիալական օգնության քաղաքային ծառայությունը:

- Առավոտյան նրանց աչքերում ուրախության ու երախտագիտության արցունքներ էին. նրանք առաջին անգամ գիշերն անցկացրել էին իրական անկողնում, - պատմել է ծառայության աշխատակիցներից մեկը:

Ինտերնետ-սրճարանն՝ ինչպես հարազատ տուն

Տոկիոյի ինտերնետ-սրճարաններից մեկն այն ճապոնացիների ժամանակավոր կացարանն ու պաշտոնական հասցեն է, որոնք համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով կորցրել են իրենց աշխատանքն ու տունը:

Սովորական ծառայություններից, անվճար խմիչք ու կոմիքսներ տրամադրելուց բացի, որ անում են մյուս ինտերնետ-սրճարանները, «Սայբըր» սրճարանն իր հաճախորդներին տրամադրում է օթեւան ու այնտեղ պաշտոնապես գրանցվելու հնարավորություն: Համացանցում աշխատանք փնտրողներն այնտեղ կարող են նաեւ ցնցուղ ընդունել, միկրոալիքային վառարանում ճաշ պատրաստել:

Ինտերնետ-սրճարանն արդեն 50 մշտական բնակիչ ունի:

- Մեր շրջանում աշխատանք ու տուն կորցրած մարդիկ այլ տեղ չունեն գնալու, այս սրճարանը նրանց վերջին հանգրվանն է, - ասել է բարեգործը՝ սրճարանի սեփականատեր Սատոն:

Սրճարանում մեկ գիշեր անցկացնելու համար «բնակիչներից» յուրաքանչյուրը 20 դոլար է վճարում, ինչը բավական էժան է մյուս կացարանների համեմատ:

Աշխատանքի նախարարության տվյալներով՝ երկրում մոտ 30 հազար մարդ էլ դեռ կկորցնի աշխատանքը: Իսկ այդ դեպքում արդեն միայն «Սայբըր» սրճարանով գործը գլուխ չի գա:

Որ մին զարկի

Անցյալ տարվա մայիսին Ռուսաստանի Վորոնեժ քաղաքի ուսանողական թաղամասում կայծակը հարվածում է միանգամից… տասնմեկ հոգու: Ամպրոպից պաշտպանվելու համար ուսանողները թաքնվել էին ծառի տակ՝ չիմանալով, որ այդպես իրենց ավելի մեծ վտանգի են ենթարկում: Կայծակը հարվածում է ծառին, նրանից էլ՝ էլեկտրական հոսանքը փոխանցվում է երիտասարդներին:

Նրանց բոլորին տեղափոխում են Վորոնեժի շրջանային հիվանդանոց: Բարեբախտաբար, բոլոր տուժածները ողջ են մնում:

Հիշեցնում ենք՝ մասնագետները խորհուրդ են տալիս ամպրոպի ու կայծակի ժամանակ խուսափել ծառերին մոտ գտնվելուց: Խոսքը հատկապես այն ծառերի մասին է, որոնք ունեն խոր արմատային համակարգ, որի ծայրերը հասնում են ստորգետնյա ջրերին: Այդպիսի ծառերից է, օրինակ, կաղնին:

Հինգ րոպեում 310 անգամ

2007 թ. ապրիլի 19-ին Ինդոնեզիայի մայրաքաղաքի մոտակայքում գտնվող փոքրիկ Բոգոր քաղաքին կայծակը հինգ րոպեում 310 հարված է հասցնում: Դրանից մոտ մեկ շաբաթ առաջ օդերեւութաբանական կայանում մեկ օրվա ընթացքում կայծակի 1112 հարված էր գրանցվել:

Չնայած այս վայրը վաղուց արդեն օդերեւութաբաններին հայտնի է որպես «Ամպրոպների քաղաք», այս ցուցանիշը բավական մեծ էր նույնիսկ ինդոնեզիացիների համար: Ամպրոպի գոռգոռոցն այստեղ լսում են տարվա մեջ մոտավորապես 40 անգամ, իսկ կայծակը Բոգոր քաղաքում այնքան էլ հազվադեպ երեւույթ չէ:

Հարված տրոլեյբուսին

Մի քանի տարի առաջ Մոսկվայում տեղացած հորդառատ անձրեւի ժամանակ փողոցներում ասֆալտի վրա ջրի բարձրությունը տեղ-տեղ հասնում է մինչեւ 40 սանտիմետրի: Կայծակը, որպես թիրախ, այս անգամ ընտրում է 41 համարի երթուղով ընթացող տրոյելբուսը: Ուղեւորներից ոչ մեկը չի տուժում:

Վթարային վայրէջք

2008 թ. ապրիլին ամերիկացի սենատոր Էդուարդ Քենեդին, որը սերում է Քենեդիների հայտնի տոհմից, 8-տեղանոց փոքրիկ ինքնաթիռով Նորթ Ադամս քաղաքից վերադառնում էր տուն՝ Քեյփ Քոդ թերակղզի: Ճանապարհին կայծակը հարվածում է ինքնաթիռին, որից հետո այն ամբողջությամբ հոսանքազրկվում է: Օդաչուն ստիպված է լինում առանց որեւէ սարքավորման, բառացիորեն կուրորեն, վթարային վայրէջք կատարել Քոնեքթիքութ նահանգում: Ինքնաթիռի բարձրաստիճան ուղեւորներից ոչ մեկը չի տուժում:

Բջջային հարված

Բրիտանացի բժիշկների հավաստմամբ՝ ամպրոպի ժամանակ բջջային հեռախոսները կարող են չափազանց վտանգավոր լինել: Վիճակագրության համաձայն՝ յուրաքանչյուր տարի Մեծ Բրիտանիայում կայծակը 30-40 մարդու է հարվածում, որոնցից, միջին հաշվով, երեքը մահացու ելք է ունենում: Մարդկանց զգալի մասը ողջ է մնում մաշկի՝ էլեկտրական հոսանքի նկատմամբ ունեցած բարձր դիմադրողականության շնորհիվ: Կայծակն անցնում է մարմնի մակերեսով ու խոր չի թափանցում ներս: Սակայն որոշ հաղորդիչ նյութեր (օրինակ՝ մետաղներն ու հեղուկները) կարող են ազդել կայծակի էլեկտրական լիցքի ուղղության վրա՝ ստիպելով դրան թափանցել մարմնի մեջ: Արդյունքում՝ վնասվում են մարդու ներքին օրգանները: Տուժածը կարող է մահանալ կամ դառնալ հաշմանդամ:

Վերը նշված վտանգավոր հատկությամբ է օժտված նաեւ բջջային հեռախոսը, հատկապես եթե այն օգտագործում են ամպրոպի ժամանակ: Մի անգամ լոնդոնյան զբոսայգիներից մեկում կայծակը հարվածել է 15-ամյա մի աղջկա, որն ամպրոպի ժամանակ խոսում էր բջջային հեռախոսով: Հարվածի հետեւանքով էլեկտրական լիցքը հեռախոսի միջոցով անցել էր աղջկա ականջի միջով ու լրջորեն վնասել թմբկաթաղանթը: Աղջկա կյանքը հաջողվել էր փրկել, սակայն այժմ նա գամված է հաշմանդամի սայլակին, կորցրել է լսողությունն ու տառապում է հիշողության կորստով:

Նմանատիպ մի դեպք էլ տեղի է ունեցել Չինաստանում: Ամպրոպը վրա է տալիս այն ժամանակ, երբ զբոսաշրջիկները գտնվում էին չինական Մեծ պատի մոտ: Վատ եղանակը նրանց չի վախեցնում, եւ զբոսաշրջիկների 15-հոգանոց խումբը շարունակում է բարձրանալ պատի վրա: Սակայն նրանցից մեկը որոշում է զանգահարել իր մտերիմներին ու անմիջապես պատմել տպավորությունների մասին: Ֆիզիկայի օրենքների համաձայն՝ բջջային հեռախոսը կայծակի համար շանթարգելի դեր է կատարում, եւ էլեկտրական հզոր լիցքը հարվածում է հենց այնտեղ, ուր կանգնած էին բնության տեսարանով հիացող զբոսաշրջիկները: Նրանք բոլորը ծանր այրվածքներով տեղափոխվում են հիվանդանոց:

Անցյալ տարի ամռանը Բաշկիրիայում կայծակի զոհ է դառնում միանգամից երեք մարդ, եւս հինգը՝ այրվածքներով տեղափոխվում են հիվանդանոց: Ամռան տապին Կամա գետի ափին բազմաթիվ հանգստացողներ կային: Հանկարծ երկինքը միանգամից մթնում է, ու ամպրոպ է սկսում: Ամենայն հավանականությամբ, կայծակի էլեկտրական լիցքը մարդկանց կողմն էր ձգել զոհերից մեկի բջջային հեռախոսը:

Չգիտես՝ բախտը որտեղ կգտնի քեզ

2008 թ. հուլիսին Ռուսաստանի Ալթայի շրջանում մի երաժշտական փառատոն էր անցկացվում: Համերգը բացօթյա էր, մասնակիցները եւս բնակվում էին մոտակայքում ստեղծված վրանային քաղաքում: Փառատոնի բացման նախօրեին հորդ անձրեւ է սկսվում: Գնդաձեւ կայծակը հարվածում է ծառին, իսկ հետո՝ դրա տակ տեղադրված վրանին, որի մեջ երեք մարդ կար: Նրանցից մեկը՝ կոմպոզիտոր Ալեքսեյ Արբուզովը տեղում մահանում է, մյուս երկուսը տարբեր աստիճանների այրվածքներով տեղափոխվում են հիվանդանոց:

Զոհված կոմպոզիտորը պատրաստվում էր փառատոնին ներկայացնել «Ճակատագրի գետը» անունով մի երգ, որտեղ այսպիսի տողեր կային. «Չգիտես, թե որտեղ կգտնես քո բախտը…»:

Պատրաստեց
Գոհար Բաղդասարյանը

արտակարգ ժամանց

Առաջին օգնություն

Վերջերս Իսրայելի շտապօգնության ծառայությունը, որը կոչվում է «Դավթի կարմիր վահան», առաջին օգնության հատուկ դասընթացներ է նախաձեռնել... մարմնավաճառների համար: Ընդ որում՝ պետական միջոցների հաշվին: Ամբողջ խնդիրն այն է, որ տեղի հասարակաց տներում տարեցտարի աճում է սրտի նոպայից մահացող «հաճախորդների» թիվը:

Շտապօգնության Երուսաղեմի բրիգադներից մեկը ղեկավարող բժիշկ Խաիմ Կորդովայի վկայությամբ՝ վերջին տարվա ընթացքում իրենք բազմաթիվ ահազանգեր են ստացել հասարակաց տներից, որտեղի «հաճախորդները ֆիզիկական ու հուզական գերլարվածության հետեւանքով» սրտի անբավարարություն են ունեցել: Բժիշկը վստահ է, որ «սիրո քրմուհիների» ուսուցումը կարող է շատ մարդկանց կյանք փրկել:

Նշենք, որ Իսրայելում մարմնավաճառությունն արգելված չէ, սակայն հասարակաց տների գործունեությունը եւս օրենքով կարգավորված չէ: Երկրի բոլոր խոշոր քաղաքներում գործում են, այսպես ասած, «հանդուրժողականության տներ»: Շտապօգնության ծառայության մամուլի խոսնակը նշել է, որ մարմնավաճառությամբ զբաղվելն անբարոյականություն է, սակայն առավել անբարոյական է թույլ տալ, որ մարդը մահանա մյուսների անգիտության պատճառով:



Շնորհակալական նամակ

Տարիներ առաջ Ռուսաստանի շտապօգնության ծառայության կենտրոնական գրասենյակ բարձր ղեկավարության անունով մի շնորհակալական նամակ է ստացվում: Այնտեղ բառացիորեն գրված էր հետեւյալը. «Այնպես է ստացվում, որ Ամանորի գիշերը մեր հյուրերից մեկը սրտի նոպա է ունենում: Մենք զանգահարում ենք շտապօգնության ծառայություն: Գալիս է մի երիտասարդ բժիշկ, որը հազիվ էր ոտքի վրա կանգնում, եւ նրա վրայից ալկոհոլի ուժեղ հոտ էր փչում: Վերը նշված բժիշկը պահարանի դուռը շփոթում է զուգարանի դռան հետ եւ բնական կարիքները հոգում անմիջապես պահարանի դարակում, այնուհետեւ՝ բազմոցին ներարկում է կատարում, իսկ հետո շատ քաղաքավարի հրաժեշտ տալիս ու հեռանում: Մենք այնպես էինք ծիծաղում, որ նույնիսկ մեր հիվանդի սրտի նոպան անցավ: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել՝ մեզ այդքան ուրախություն պարգեւելու համար: Նույնիսկ Ձմեռ պապը չէր կարող մեր հյուրերին այդքան զվարճացնել»:

Բժիշկ, հասեք

Ամանորի գիշերը մեկը զանգահարում է շտապօգնության ծառայություն: Հերթապահ բժիշկը վերցնում է խոսափողը.

- Շտապօգնության ծառայություն:

- Ալո, մենք այստեղ ընկերներով խմում ենք...

Բժիշկը սկսում է բարկանալ.

- Բավական է խուլիգանություն անեք... - եւ կախում է լսափողը:

Կես ժամ անց հեռախոսը նորից է զնգում.

- Ալոոոո, մենք այստեղ խմում ենք... բայց Վասյան արդեն չի խմում...նա կուլ է տվել խցանահանը...

- Ալո, ալո,- անհանգստանում է բժիշկը,- դուք ինչ-որ բան ձեռնարկե՞լ եք...

Այո, հիմա ստիպված շշերը պատառաքաղով ենք բացում:

Ոչ միայն բուժօգնություն

Մեծ Բրիտանիայի շտապօգնության ծառայությունում նույնպես վկայում են, որ Ամանորի տոներին ահազանգերի թիվն ավելանում է: Սակայն մարդիկ բժիշկների օգնությանն են դիմում հիմնականում այնպիսի խնդիրներով, որոնք կապված չեն առողջության հետ:

Մի կին գիշերային ակումբում կազմակերպված Ամանորի խնջույքի ժամանակ կոտրում է եղունգը: Նա, չգիտես ինչու, որոշել էր, որ այդ հարցում իրեն միայն բժիշկները կարող են օգնել:

Մի տղամարդ զանգահարում է շտապօգնություն եւ բողոքում, որ չի կարողանում փոխել հեռուստացույցի ալիքը: Մեկ ուրիշը դժգոհում է, որ չի կարողանում հասնել սառնարանին եւ այնտեղից զովացուցիչ հյութ վերցնել:

Մեկ այլ բրիտանացի որոշում է բժիշկներին... նախօրոք կանչել: Նա զանգահարում է շտապօգնություն եւ հայտնում, թե երազ է տեսել, որտեղ ինքն իրեն վատ է զգացել ու մահացել է:

§²ñïª³Ï³ñ· Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ñ Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñïª³Ï³ñ· ³ÉÇù¦
Éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ êäÀ

îÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý
öáËïÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
²ñ³ØáíëÇëÙ³Ý
Ò»ñ³íáñáÕª
Ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

Â»ñÃÁ ïå³·ñíáõÙ »ñ ï³ñ³ÍíáõÙ ¿ º²ÐÎ³ç³ÏóáõÃÙ³Ùµ

º ñ»ñ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am

OSCE
º íñåå³ÙáõÙ³Ýíï³Ý·áõÃÙ³Ý
¨ Ñ³Ù³·áñí³ÏóáõÃÙ³Ý
Ï³½Ù³Ï»ñåáõÃÙáõÝ »ñ»ñ³ÝÙ³Ý·ñ³ë»ÝÙ³Ï

îå³·ñí³í¿§îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³ÝÙ³ÙáõÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³Ù³Ï³Ý`1074,
ïå³Ù³Ý³ÏÁ` 5000 ûñÇÝ³ï:
Ստորագրված է տպագրության
21.1.2009 թ.